

Ծրագրի անվանումը՝ «Ցածր-ածխածնային էներգիայի մատչելի լուծումներ բոլորի համար»
Ծրագրի տևողությունը՝ 8 ամիս
Դրամաշնորհի չափը՝ 50,000 ԱՄՆ դոլար

1. Ծրագրի նկարագրություն*

Խթանել ցածր-ածխածնային տեխնոլոգիաների ցուցադրումը, տարածումը և առևտրայնացումը՝ էլեկտրական ցանցի հետ զուգահեռ աշխատող ֆոտովոլտային էլեկտրակայանների կառուցման միջոցով:

Արևային էլեկտրակայանների զարգացման համար համար կարևոր նշանակություն ունի «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում 2016թ. կատարված փոփոխությունները, որը հնարավորություն է ընձեռում ցանկացած տնտեսվարող սուբյեկտի ունենալ մինչև 150կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայան և աշխատեցնել էլեկտրական ցանցի հետ զուգահեռ:

Հաշվի առնելով վերոհիշյալ օրենքում կատարված փոփոխություններն ու «Կանաչ էներգիան հանուն Շիրակի մարզում «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի համար» ծրագրի երկրորդ փուլով (որը այլ հարցերի շարքում տրամադրում է փոքր դրամաշնորհներ «կանաչ» օբյեկտների հիմնման նպատակով) առաջարկվում է կառուցել 24կՎտ գումարային հզորությամբ ֆոտովոլտային կայաններ Գյումրի քաղաքի 1 սոցիալ-կրթական, 1 կրթական ու 1 ռեսուրս կենտրոնում:

ՀՀ Գյումրու «Թռչունյանց տուն» հասարակական կազմակերպությունը, որը գտնվում է Գյումրիում, զբաղվում է սոցիալապես անապահով ընտանիքների ու ծնողազուրկ երեխաների հոգածությամբ: Կազմակերպության շահառուները 6-18 տարեկան ավելի քան 80 սոցիալապես անապահով տղաներ ու աղջիկներ են: Այս երեխաների խնամքով, դասիարակությամբ ու կրթությամբ զբաղված են 50 աշխատակիցներ: ՀԿ սաներից 22-ը կազմակերպությունում են անցկացնում նաև գիշերակացը, իսկ մնացյալը՝ առավոտից մինչև երեկո:

«Արձագանք» նախակրթարանը, որը ներկայումս ունի 204 սան և «Կանաչ էներգիան հանուն Շիրակի մարզում «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի համար» ծրագրի շրջանակներում շահել է փոքր դրամաշնորհ արևային ջրատաքացուցիչ համակարգ տեղադրելու նպատակով: Նախակրթարանի տնօրինությունը ստանձնել է պարտավորություն, արևային ջրատաքացման համակարգի տեղադրման արդյունքում տնտեսված գումարների հաշվին զեղչել կամ ընդհանրապես զիջել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների վարձավճարը: Նախակրթարանը ամսական օգտագործում է 350 կՎտ*ժ էլ. էներգիա, որը կազմում է մոտ 18000 ՀՀ դրամ:

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի:

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, հիմնադրվել և կառուցվել է «Կանաչ էներգիան հանուն Շիրակի մարզում «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի համար» ծրագրի շրջանակներում: Այն ծառայում է Շիրակի մարզում և ՀՀ տարածքում ՎԷԱ ու էներգաարդյունավետ ոլորտներում խորհրդատվական ու ուսումնասիրական գործունեություն իրականացնելու նպատակով: Կենտրոնում հիմնվել է ուսումնասցուցադրական մոդելների տեղամաս: Ներկայումս հիմնվելու է նաև ՎԷԱ մոդելների ու տեխնոլոգիական սարքավորումների արտադրա-փորձարարական տեղամաս, որի շահագործումը ամսական կպահանջի մոտ 400կՎտ*ժ էլ. էներգիա:

2. Ծրագրում երիտասարդների ներգրավածության նկարագրություն

Ծրագրի անմիջական շահառուներ են «Թռչունյանց տուն» ՀԿ 16-18 տարեկան երեխաները, որոնք անմիջականորեն կմասնակցեն ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքներին՝ հիմնադրամի մասնագետների հսկողության ներքո: Բացի այդ ԿՏՀԿ-ն կազմակերպելու է նաև մասնագիտական կրթական դասընթացների ծրագիր, որոնց կարող են մասնակցել ոչ միայն «Թռչունյանց տուն» ՀԿ երեխաները, այլ նաև երիտասարդների, ուսանողների և այլ շահառուների համար:

3. Ծրագրի մաս կազմող, սոցիալ-տնտեսական կամ երկրնտրանքային ապրելակերպին ուղղված այլ գործողությունների նկարագրություն

Առաջնորդող օգուտներ

«Թռչունյանց տուն» հասարակական կազմակերպությունը տնտեսված գումարների հաշվին կձևավորի շրջանառու ֆոնդ, որը նպատակաուղղված կլինի շենքի հետագա էներգաարդյունավետության բարձրացմանը և սաներին ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների օգտագործման հմտություններին ու վարպետության ուսուցմանը:

«Արձագանք» նախակրթարան ՀՈԱԿ-ում տնտեսված գումարների հաշվին կիրականացվի շենքի հետագա էներգաարդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված գործառույթներ (պատուհանների փոխարինում, լուսավորության համակարգի բարելավում և այլն):

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, որի գործունեությունը ի սկզբանե նպատակաուղղված է ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունների պարզաբանմանը, ուսուցմանն ու տարածմանը, տնտեսված միջոցների հաշվին կիրականացնի տարբեր դոնորների /ՓԴԾ, ԵՄ և այլն/ կողմից ոլորտում իրականացված ծրագրերի վերլուծություն՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական ոլորտներում: Մտացված արդյունքները կհանդիսանան հավաստի ելակետային տվյալներ ոլորտի հետագա զարգացման ու քաղաքականության օպտիմալ զարգացման համար:

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի:

4. Տեղաբնակներին էականորեն Ծրագրում ներգրավելուն ուղղված գործողությունների նկարագրություն

Ծրագրի իրականացման ընթացքում ու ավարտից հետո գիտելիքի փոխանցման ու տեխնոլոգիական լուծումների արդիականացման համար առկա են բավարար պայմաններ: Ինչպես արդեն նշել ենք «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, որը հիմնադրվել է 2016թ. -ին զբաղվում է ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների փորձի ուսուսմասիրություններով ու տարածմամբ, ունի ստեղծած ՎԷԱ մոդելների ցուցադրական տեղամաս, զբաղվում է ՎԷԱ ոլորտում տարբեր տեխնոլոգիական լուծումների նախատիպերի պատրաստմամբ և փորձարկումներով: Նկարագրված հնարավորությունները հասանելի են ուսանողներին, վարպետներին, անհատ քաղաքացիներին և հասարակության լայն շրջանակներին:

Բացի այդ գործընկեր «Ֆերտի» ՀԿ 2013թ. -ին ԳԷՀ ՓԴԾ ֆինանսավորման շրջանակներում Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարանի Գյումրու մասնաճյուղում հիմնել է «Վերականգնվող էներգիայի ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների» ուսումնական լաբորատորիան, որը ներկայումս գործում է և երիտասարդությանը փոխանցում է համապատասխան գիտելիքներ ՎԷԱ ու ԷԱ ոլորտներում: Ծրագրի իրականացման ընթացքում կիրառարակվեն նաև ուղեցույցներ ու տեղեկատվական բրոշյուրներ տեխնոլոգիական լուծումները առավել հասանելի դարձնելու ու դրանց օգտագործման հնարավոր տարբերակները լուսաբանելու նպատակով: Ծրագրի մասին նաև նյութ կտեղադրվի ԿՏՀԿ հիմնադրամի նոր ստեղծվող կայքում:

5. Քաղաքականության ազդեցությունը. Ծրագրի ակնկալվող քաղաքականության ազդեցության նկարագրությունը

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը ՀՀ-ում առաջատար կազմակերպություն է, որն զբաղվում է վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, դրանց միջոցով այլընտրանքային լուծումների մշակմամբ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների մշակմամբ: Կենտրոնը մշտապես կազմակերպում է դասընթացներ, սեմինարներ հասարակության տարբեր շերտերի համար: Մինևույն ժամանակ կենտրոնը մշտապես իրականացնում է ինչպես իր կողմից, այնպես էլ այլ կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունների, ստացված արդյունքների հրապարակումներ, տեղեկատվության տարբեր աղբյուրների օգտագործմամբ:

6. Դրամաշնորհառուի կարողությունների գնահատման հիման վրա, որպես Ծրագրի մի մաս կարողությունների կարիքների և գործունեության նկարագրություն

Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում առաջնորդվում է նորարական լուծումների փնտրման, իրականացման ու գիտելիքի փոխանցման սկզբունքներով: Այս գործառույթների իրականացման համար լայն հնարավորություն է ստեղծում նաև «Կանաչ էներգիան հանուն Շիրակի մարզում «կանաչ» սոցիալ-տնտեսական

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի:

առաջընթացի համար» ծրագրի ընթացքում «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն»-ում հիմնվող փորձա-արտադրական տեղամասը, որի նպատակն է իրականացնելու ՎԷԱ ու ԷԱ նախատիպերի պատրաստման ու փորձարկման գործընթացներ: Սա կլինի լավագույն պլատֆորմ ոլորտը զարգացնելու ու երիտասարդ մասնագետներին գիտելիքներ ու փորձ փոխանցելու նպատակով: Կազմակերպության կողմից իրականացվող գործողություններն ու ծրագրերը հիմնականում նպատակաուղղված են սոցիալական, կրթական ու տնտեսական հիմնախնդիրների կարգավորմանն ու էներգետիկ ռեսուրսների արդյունավետ կառավարմանը:

7. Համայնքում կանանց և տղամարդկանց դերի, առկա անհամամասնության, Ծրագրի օգուտները նրանց հավասարաչափ հասցեավորման նկարագրություն:

Նախագծի շահառուները պատկանում են տարբեր գենդերային խմբերի՝ մասնավորապես «Թռչունյանց տուն» ՀԿ-ում 80 սաներից 40%-ը աղջիկներ, իսկ 60%-ը տղաներ են, աշխատակիցներից 8-ը տղամարդ և 42-ը կին, որոնք անմիջականորեն զբաղվում են սաների ուսուսման-դաստիարակչական գործընթացներով: «Արձագանք» նախակրթարան հաստատությունը ունի 204 սաներ՝ աղջիկներ ու տղաներ և նրանց ուսուսման-դաստիարակչական գործընթացներով զբաղված են 28 մանկավարժներ ու սպասարկող անձնակազմ: «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, որը հիմնադրվել է 2016թ.-ին զբաղվում է ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների փորձի ուսուսմանսիրություններով ու տարածմամբ, ունի ստեղծած ՎԷԱ մոդելների ցուցադրական տեղամաս, զբաղվում է ՎԷԱ ոլորտում տարբեր տեխնոլոգիական լուծումների նախատիպերի պատրաստմամբ և փորձարկումներով: Նկարագրված հնարավորությունները հասանելի են ուսանողներին, վարպետներին, անհատ քաղաքացիներին և հասարակության լայն շրջանակներին:

8. Ծրագրի հաղորդակցման ռազմավարությունը՝ ուղղված հանրային իրազեկման խթանմանը

Ծրագրի իրականացման ընթացքում կիրառարակվեն ուղեցույցներ ու տեղեկատվական բրոշուրներ տեխնոլոգիական լուծումները առավել հասանելի դարձնելու ու դրանց օգտագործման հնարավոր տարբերակները լուսաբանելու նպատակով: Ծրագրի ու ստացված արդյունքների մասին նյութ կտեղադրվի նաև ԿՏՀԿ հիմնադրամի agtc.am կայքում:

9. Ծրագրի գիտելիքների կառավարման ռազմավարությունը, գիտելիքի կուտակման և փոխանցման պլանը, Ծրագրի արդյունքում ստացված գիտելիքի արտադրանքը:

Ծրագրի իրականացման ընթացքում ու ավարտից հետո գիտելիքի փոխանցման ու տեխնոլոգիական լուծումների արդիականացման համար առկա են բավարար պայմաններ: «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, որը

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի:

հիմնադրվել է 2016թ.-ին զբաղվում է ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների փորձի ուսուսմասիրություններով ու տարածմամբ, ստեղծված ՎԷԱ մոդելների ցուցադրական տեղամասը կզբաղվի ՎԷԱ ոլորտում տարբեր տեխնոլոգիական լուծումների նախատիպերի պատրաստմամբ և փորձարկումներով: Նկարագրված հնարավորությունները հասանելի են ուսանողներին, վարպետներին, անհատ քաղաքացիներին և հասարակության լայն շրջանակներին:

Բացի այդ գործընկեր «Ֆերտի» ՀԿ 2013թ.-ին ԳԷՀ ՓԴԾ ֆինանսավորման շրջանակներում ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղում հիմնել է «Վերականգնվող էներգիայի ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների» ուսուսմական լաբորատորիան, որը ներկայումս գործում է և երիտասարդությանը փոխանցում է համապատասխան գիտելիքներ ՎԷԱ ու ԷԱ ոլորտներում:

10. Քաղաքականության ազդեցություն. Ծրագրի փորձառության և լավագույն փորձի հնարավոր ազդեցությունը կենտրոնական/տեղական կառավարման քաղաքականության վարման գործընթացների վրա և հնարավոր ներդրումները քաղաքականության մշակման և ձևավորման վրա:

Ծրագրի ընթացքում կենտրոնի մասնագետները համագործակցությամբ այլ կազմակերպությունների մասնագետների հետ կմշակեն ու տարբեր կառավարչական ու որոշումներ կայացնող կառավարման մարմինների կներկայացնեն համապատասխան առաջարկներ ստացված լավագույն փորձի տարածման համար:

11. Ծրագրի գործողությունների կրկնօրինակման հնարավորությունները:

Նախագծի արդյունքների ստացումը կարևոր է ոչ միայն ծրագրի արդյունավետության գնահատման, այլ նաև հետագայում առավել կատարելագործված ու արդյունավետ համակարգեր մշակելու ու նախագծելու առումով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կատարվել են փոփոխություններ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում, անհրաժեշտ է մոնիտորինգի ու ծրագրի իրականացման արդյունքում ստացված ցուցանիշները ճիշտ օգտագործել տեխնոլոգիայի կրկնօրինակումն ապահովելու նպատակով: Բյուջեում ՓԴԾ-ից հայցվող գումարը հիմնականում ներառում է կոնկրետ տեխնոլոգիայով պայմանավորված ծախսերը, իսկ օժանդակ ու ծրագրի շրջանակներով տեխնոլոգիայի հետ անմիջականորեն չկապակցված ծախսերը իրականացվում են այլ ֆինանսների հաշվին: Այս մոտեցումը առավել տեսանելի ու ընկալելի կդարձնի նախագծով պայմանավորված ծախսումները և հեշտությամբ կգնահատվի հետզման ժամանակահատվածը: Ներկայացված գործառույթները հնարավորություն կտան տարբեր տնտեսվարող սուբյեկտների գնահատել ու կրկնօրինակել տեխնոլոգիան:

12. Ծրագրի ընդլայնման պլանավորումը առանց ԳԷՀ դրամաշնորհների

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի:

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, որի գործունեությունը ի սկզբանե նպատակաուղղված է ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառման հմարավորությունների պարզաբանման, ուսուցման ու տարածմանը տնտեսված միջոցների հաշվին կիրականացնի տարբեր դոնորների /ՓԴԾ, ԵՄ և այլն/ կողմից ոլորտում իրականացված ծրագրերի վերլուծություն՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական ոլորտներում: Ստացված արդյունքները կհանդիսանան հավաստի էլակետային տվյալներ ոլորտի հետագա զարգացման ու քաղաքականության օպտիմալ զարգացման համար:

13. Ծրագրի կայունությունը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը, որը ՀՀ-ում իրականացնում է ՎԷԱ ու էներգաարդյունավետ ոլորտների ուսուցումներ, իրազեկման բարձրացման գործառնություններ ու տարբեր նորարական լուծումների ու տեխնոլոգիաների տարածման գործընթացներ ծրագրի շարունակականությունը կապահովի: Կենտրոնում ստեղծվող ուսուցման-արտադրական տեղամասը, որն ինչպես արդեն նշել ենք ծառայելու է ՎԷԱ ու ԷԱ ոլորտում նախատիպերի պատրաստման ու փորձարկումների համար նույնպես կայուն հարթակ է ծրագրի կայունությունը ապահովելու առումով: Ծրագրի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը նույնպես խթանում է նախատեսվող գործընթացների կայունությունն ու զարգացումը: Ծրագրի շարունակականության ապահովումը նաև պայմանավորված է «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով, որը հնարավորություն է ընձեռում ցանկացած տնտեսվարող սուբյեկտի ունենալ սեփական արևային միկրոէլեկտրակայանը:

«Թռչունյանց տուն» ՀԿ-ն և «Արձագանք» նախակրթարան հաստատությունը տնտեսված գումարները կնպատակաուղղեն և սոցիալական խնդիրների մեղմանը և շենքի էներգաարդյունավետության բարձրացմանը; Մասնավորապես՝ նախակրթարանը կզեղչի կամ ամբողջությամբ կզիջի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների վարձավճարները, իսկ «Թռչունյանց տուն» ՀԿ-ն տնտեսված գումարները կնպատակաուղղի շենքի էներգաարդյունավետության բարձրացմանն ու երեխաների սոցիալական խնդիրների լուծմանը: Ընդհանուր առմամբ երեք կազմակերպությունների կողմից ամսական կտնտեսվի առնվազն 150-160 հազար դրամ: Այս գումարը ընդհանուր հանրագումարում կծախսվի ՎԷԱ ու ԷԱ տեխնոլոգիաների զարգացմանն ու ներդրմանը և սոցիալական խնդիրների լուծմանը:

14. Ծրագրի ընդլայնման պլանավորումը ԳԷՀ միջնաժամկետ դրամաշնորհով:

Կառուցվող համակարգերի հզորության ավելացման համար կարևորագույն նշանակություն ունի «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները (ցանկացած տնտեսվարող սուբյեկտի ունենալ մինչև 150կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայան և աշխատեցնել էլեկտրահաղորդման ցանցի հետ գույքահետ):

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի:

15. Ծրագրի ընդլայնման պլանավորումը ԳԷՀ լայնածավալ ծրագրերով:

«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամը համագործակցում է Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնի հետ, որը հիմնադրվել է 1997 թ-ին ՀՀ / 95 / G31 / A / 1G / 99 ՄԱԶԾ / ԳԷՖ «Հայաստան երկիր կլիմայի փոփոխության ուսումնասիրությունը» ծրագրի շրջանակներում:

16. Ծրագրի արդյունքները

- «Թռչունյանց տուն» ՀԿ-ն կունենա 16 կՎտ հզորությամբ արևային միկրոէլեկտրակայան
- «Թռչունյանց տուն» ՀԿ տնտեսված գումարների հաշվին կձևավորի շրջանառու ֆոնդ, որը նպատակաուղղված կլինի շենքի հետագա էներգաարդյունավետության բարձրացմանը և սաներին ՎԷԱ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների օգտագործման հմտություններին ու վարպետության ուսուցմանը:
- «Արձագանք» նախակրթարանը ունի 4,5 կՎտ հզորությամբ արևային էլ. կայան:
- Տնտեսված գումարների հաշվին կիրականացվի «Արձագանք» նախակրթարանի շենքի հետագա էներգաարդյունավետության բարձրացմանը նպատակաուղղված գործառույթներ (պատուհանների փոխարինում, լուսավորության համակարգի բարելավում և այլն):
- «Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամի արևային էլեկտրակայանի հզորությունը կավելանա 4 կՎտ-ով՝ հագեցված մոնիտորինգային չափիչ սարքավորումներով:
- Կենտրոնը բացի ուսումնա-խորհրդատվական գործունեությունից կկարողանա իրականացնել նաև ՎԷԱ ու ԷԱ ոլորտների նախատիպերի պատրաստում, կայանի աշխատանքի արդյունքում տնտեսված գումարները կնպատակաուղղվեն կենտրոնի գործունեության բարելավմանը:
- Գույքագրված ու վերլուծված են տարբեր ծրագրերի ու նախագծերի բնապահպանական, սոցիալական ու տնտեսական ազդեցությունները:

* Հայերեն տեքստում ենթավերնագրերը թարգմանված են բովանդակային, ոչ բառացի: